

# Գուսանագյուղ

Վարչական ղեկավար՝ Վասակ Ղազարյան

Հեռ 093 00 13 17

Մակերես՝ 23.5կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 923

[gusanagyugh.shirak@mta.gov.am](mailto:gusanagyugh.shirak@mta.gov.am)

Գյուղ Մարալիկի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 21կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գափուլու, Կապլի, Կապուլի, Կափուլի, Ղափըլչի, Ղափուլ, Ղափչի, Ղափուլու անվանումները: Գտնվում է Երևան-Գյումրի երկաթուղու վրա: Գուսանագյուղ է վերանվանվել 1977 թ-ին:

Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյակում՝ ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ:

Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի անդեզիտաբազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղն ունի կանգուն եկեղեցի (11-րդ դար): Շրջակայքում պահպանվել են նախնադարյան և ուրարտական ժամանակներին վերաբերող հնավայրեր՝ ավերակ բերդ, որին տեղացիներին նվանում են Ղալա: Պահպանվել են նաև կիկլոպյան շինությունների հետքեր:

Բնակչության նախնիների մի մասը այստեղ են գաղթել 1829-1830թթ Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանըղի, Մուշի շրջաններից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 138, 1897 թ-ին՝ 1466, 1926 թ-ին՝ 1062, 1939 թ-ին՝ 1433, 1959 թ-ին՝ 1207, 1970 թ-ին՝ 978, 1979 թ-ին՝ 876 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 923 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 32%, աշխատունակներ՝ 49%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 97 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, հիվանդանոց, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 668հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 368 և 995 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Գուսանագյուղ